Australian Government

Department of Health

Վշտի և տրավմայի աջակցություն COVID-19-ի ազդեցության ենթարկվածներին տարեցների խնամքի ոլորտում

Ավստրալիայի կառավարությունը ֆինանսավորում է ծառայություններին՝ տրամադրելու վշտի, կորստի եւ տրավմայի աջակցություն Ավստրալիայի տարեցների խնամքի ոլորտում: Ծառայությունները հասանելի են բնակարանային տարեցների խնամքի բնակիչների, տնային խնամք ստացողների, նրանց սիրելիների և տարեցների խնամքի անձնակազմի համար: Դուք կարող եք օգտագործել այդ ծառայությունները ինքներդ կամ կարող եք տեղեկացնել ձեր սիրելիներին և համայնքներին դրանց մասին:

Բոլորը կարող են դրանցից անվճար օգտվել:

Այս բոլոր կազմակերպությունները հարգալից են ժողովրդի մշակույթի, կրոնի, ինքնության և ապրելակերպի նկատմամբ: Եթե դուք կամ ձեր սիրելին պահանջում եք թարգմանիչ, զանգահարեք Թարգմանչական ծառայություն **131 450** հեռախոսահամարով: Հարցրեք ձեր լեզուն և այն ծառայությունը, որին ցանկանում եք միանալ:

Վշտի եւ կորստի աջակցություն

Հեռախոսային խորհրդատվություն

Ավստրալիայի վշտի և կորստի կենտրոնը օգնում է տարեցների խնամքի անձնակազմին, տարեցների խնամք տրամադրողներին, կրոնական և համայնքային խմբերին աջակցել իրենց համայնքներին, որոնք վիշտ և կորուստ են ապրում COVID-19-ի պատճառով: Զանգահարեք **1800 222 200** հեռախոսահամարով՝ ստանալու խորհուրդներ, թե ինչպես պետք է օգնել ձեր համայնքին:

Երբ դուք զանգահարեք, դուք կարող եք խոսել նրանց հետ այն մասին, թե ինչի կարիք ունեք ձեզ կամ ձեր սիրելիներին աջակցելու համար: Սա կարող է ներառել խմբային խորհրդատվություն կամ անհատական խորհրդատվություն բժշկի հետ հեռաբժշկության միջոցով (հեռախոսով կամ տեսախորհրդակցության միջոցով) կամ անձամբ:

Ավստրալիայի վշտի եւ կորստի կենտրոնը ունի երկլեզու անձնակազմ, ովքեր աշխատում են հաճախորդների հետ արաբերեն, չեխերեն, պարսկերեն, ֆրանսերեն, իտալերեն, ճապոներեն, մալթերեն, սինհալերեն, թամիլերեն, իսպաներեն եւ իդիշ լեզուներով: Հարցրեք ձեր լեզուն, երբ դուք զանգահարեք: Այլ լեզուների համար՝ նախ զանգահարեք Թարգմանչական ծառայություն **131 450** հեռախոսահամարով և խնդրեք միացնել Ավստրալիայի վշտի և կորստի կենտրոն:

Ավստրալիայի վշտի եւ կորստի կենտրոնը նաև աջակցում է Auslan-ի օգտագործումը խուլ եւ լսողության խանգարումներ ունեցող մարդկանց համար:

Տկարամտության աջակցություն

Ավստրալիայի տկարամտության աջակցության ծառայությունը ապահովում է 24-ժամյա օգնություն ամբողջ Ավստրալիայում՝ տարին 365 օր: Նրանք տրամադրում են խորհուրդներ եւ խորհրդատվութուն այն մարդկանց համար, ովքեր հոգ են տանում տկարամտություն ունեցող որևէ մեկին: Զանգահարեք նրանց **1800 699 799** հեռախոսահամարով: Եթե դուք կամ ձեր սիրելին պահանջում եք թարգմանիչ, զանգահարեք Թարգմանչական ծառայություն **131 450** հեռախոսահամարով և խնդրեք միացնել Ավստրալիայի տկարամտության աջակցության ծառայություն:

Շահերի պաշտպանություն

Տարեցների շահերի պաշտպանության ցանցը մատուցում է տարեցների խնամքի շահերի պաշտպանության ծառայություններ ամբողջ Ավստրալիայում: Եթե դուք խնդիրներ եք ունենում տարեցների խնամքի ծառայությունների հետ, ապա նրանք կարող են ձեզ օգնել: Տարեցների շահերի պաշտպանության ցանցը տրամադրում է անվճար, գաղտնի, անկախ շահերի պաշտպանություն, տեղեկատվություն և կրթություն տարեց մարդկանց, նրանց ընտանիքների և ներկայացուցիչների համար: Զանգահարեք նրանց **1800 700 600** հեռախոսահամարով: Եթե դուք կամ ձեր սիրելին պահանջում եք թարգմանիչ, զանգահարեք Թարգմանչական ծառայություն **131 450** հեռախոսահամարով և խնդրեք միացնել Տարեցների շահերի պաշտպանության ցանցի հետ:

Լրացուցիչ տեղեկատվություն COVID-19-ի մասին

Կարևոր է տեղեկություններ ստանալ պաշտոնական աղբյուրների միջոցով: Այցելեք health.gov.au կայքը կամ զանգահարեք Ազգային կորոնավիրուսի օգնության գիծ **1800 020 080** հեռախոսահամարով: Թարգմանչական ծառայությունների համար՝ զանգահարեք **131 450** հեռախոսահամարով և խնդրեք միացնել Ազգային կորոնավիրուսի օգնության գիծ: